ՖՐԻԴՐԻԽ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ԽԼՂԱԹՅԱՆ

Կյանքից հեռացավ Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանի հայագիտության ամբիոնի վարիչ, անվանի բանասեր, հայագետ, պրոֆեսոր Ֆրիդրիխ Հովհաննեսի Խլղաթյանը:

Ֆ. Խլղաթյանը ծնվել է 1937 թ. Գեղարքունիքի մարզի Մարտունու շրջանի Վերին Գետաշեն գյուղում: Գերազանցության մեդալով ավարտելով Մարտունի քաղաքի թիվ 1 միջնակարգ դպրոցը՝ 1962 թ. ընդունվել է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտի լեզվագրական ֆակուլտետի հեռակա բաժինը: Ուսանելու տարիներին աշխատել է դպրոցում՝ որպես հայոց լեզվի և գրականության ուսուցիչ, ուսմասվար, ապա աշխատակցել է «Սևան» միջշրջանային թերթին՝ որպես պատասխանատու քարտուղար:

Նկատի ունենալով Ֆ. Խլղաթյանի լեզվական հետաքրքրություններն ու հակումները, հայերենի տարբեր բաժինների ու պատմական փուլերի խոր իմացությունը՝ բուհն ավարտելուց անմիջապես հետո նրան նշանակել են հեռակա մանկավարժական ինստիտուտի դասախոս:

1969 թ. Ֆ. Խլղաթյանը տեղափոխվել է Վ. Բրյուսովի անվան ռուսաց և օտար լեզուների պետական մանկավարժական ինստիտուտ, որտեղ դասախոսական աշխատանքին զուգահեռ վարել է մի շարք պաշտոններ: 1970-1990 թթ. որպես դեկան պաշտոնավարել է նախապատրաստական բաժնում: 1994-1996 թթ. աշխատել է որպես համալսարանի գիտական աշխատանքների գծով պրոռեկտոր: 1996 թ. եղել է համալսարանի ռեկտորի պաշտոնակատար: 1990 թվականից մինչև իր կյանքի վերջը համալսարանի հայագիտության ամբիոնի վարիչն էր:

Ֆ. Խլղաթյանը 1971 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն՝ նվիրված Դ. Դեմիրճյանի «Վարդանանք» պատմավեպի լեզվառճական քննությանը, և ստացել բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: 1976-ից դոցենտ է, 1993-ից՝ պրոֆեսոր: Պրոֆ. Ֆ. Խլղաթյանը եղել է համալսարանի գիտխորհրդի, բուհում գործող մասնագիտական խորհրդի և օտար լեզուների ֆակուլտետի խորհրդի անդամ: Նա ակտիվ մասնակցություն է ունեցել հանրապետության կրթական համակարգի գործընթացներին. հանրակրթական դպրոցի 4-10-րդ դասարանների հայոց լեզվի դասագրքերի հեղինակ է:

Բուհական համակարգից դուրս Ֆ. Խլղաթյանը լայն գործունեություն է ծավալել հանրապետական մամուլում՝ տպագրելով տարաբնույթ հոդվածներ, ակնարկներ, ֆելիետոններ, ընտրվել է ԽՍՀՄ Ժուռնալիստների միության անդամ: Նա խորապես մտահոգված էր հայոց լեզվի մաքրության և լեզվի մշակույթի հարցերով և հանրապետական հեռուստատեսությամբ 1980 թ. սկսած՝ պարբերաբար արծարծել է այդ թեմաները: Այդ շրջանում մի քանի տարի անընդմեջ վարել է «Մեր լեզուն, մեր խոսքը» ամենշաբաթյա հեռուստահաղորդաշարը:

Ֆ. Խլղաթյանի հետաքրքրությունների շրջանակները բազմազան են. ոճաբանական հարցեր, դասագրքաստեղծ աշխատանք, բառարանագրություն, բուհական ձեռնարկներ և ... գեղանկարչություն:

Հայ իրականության մեջ ոճագիտական հարցերի առաջին արծարծողներից և համակողմանի քննողներից մեկը պրոֆ. Ֆ. Խլղաթյանն է. նա 1970-ական թվականներից պարբերաբար զբաղվել է ոճաբանության խնդիրներով՝ կազմելով ոճաբանական տերմինների բառարան-տեղեկատուներ, ոճաբանության դասագրքեր (ակադ. Գ. Ջահուկյանի հեղինա-կակցությամբ), ընդ որում՝ նրա կազմած ոճաբանության դասագրքերը հասցեագրված են թե՛ դպրոցին, թե՛ բուհին:

Ֆ. Խլղաթյանը կարևոր ներդրում ունի հայագիտության մեջ հայ բառարանագրական ավանդույթները շարունակելու և խորացնելու առումով. նրա բառարանագրական գործունեությունը չի սահմանափակվում ոճաբանական տերմինների տարաբնույթ բառարաններ կազմելու աշխատանքով. նա հրատարակել է «Դ. Դեմիրճյանի «Վարդանանք» պատմավեպի բառարան» (Ե., 2009, ինչպես նաև «Անգլերեն-հայերեն բառարան-տեղեկատու. ֆինանսներ և բանկեր» (Ե., 2005), «Անգլերեն-հայերեն, հայերեն-անգլերեն ֆինանսաբանկային տերմինների բառարան» (Ե., 2009) աշխատությունները: Ֆ. Խլղաթյանի գիտական ժառանգության մեջ մնայուն արժեք են նրա կազմած դասագրքերը հանրակրթության միջին դպրոցի գրեթե բոլոր դասարանների համար (4-10-րդ դասարաններ): 1994- 2008 թթ. նրա հրատարակած դասագրքերը մեծ ընդունելություն են գտել հանրապետության կրթական համակարգում, որովհետև այդ դասագրքերի հիմքում ընկած են ժամանակակից ռուսական և եվրոպական դասագրքերի հիմնական սկզբունքներն ու մեթոդները, և, որ կարևորն է, այդ դասագրքերը նախորդ ձեռնարկներից տարբերվում են իրենց մեթոդական համակարգով, գիտական մատչելի բացատրություններով, վարժությունների տարաբնույթ տեսակներով և այլն:

Իր կազմած դասագրքերում պրոֆ. Ֆ. Խլղաթյանը լեզվական շատ երևույթների տվել է նորովի մեկնաբանություն՝ շեղվելով ավանդական ուղուց և ելնելով այն հանգամանքից, որ դպրոցական նորմատիվ քերականության մեջ պետք է հրաժարվել գիտական խրթին ձևակերպումներից, խիստ մասնագիտական տերմիններից և որոշ իրողությունների երկակի մեկնաբանություններից:

Դպրոցական դասագրքերին զուգահեռ Ֆ. Խլղաթյանը հրատարկել է մեթոդական ուղեցույցներ տարբեր դասարանների հայոց լեզվի ուսուցիչների համար, որտեղ շարադրված են հեղինակի մեթոդական ըմբռնումները՝ այս կամ այն ծրագրային նյութերը մատուցելու առումով:

Լեզվաբանը չի սահմանափակվել դպրոցական դասագրքերի ստեղծման աշխատանքով. իբրև բուհի դասախոս ու պրոֆեսոր՝ նա մտահոգված էր լեզվաբանական համալսարանում հայերենի դասավանդման խնդիրներով, մանավանդ որ պետական լեզվաբանական համալսարանում դասավանդվող եվրոպական բազմաթիվ լեզուների շարքում պետք է առավել ուշադրություն դարձվեր հայերենի իմացությանը՝ որպես հիմք և կողմնորոշում օտար լեզուները յուրացնելու ճանապարհին:

Այդ մտահոգությամբ Ֆ. Խլղաթյանը կազմել է և հրատարակել «Ժամանակակից հայոց լեզու» բուհական ձեռնարկը՝ 3 պրակով (2005- 2007 թթ.): Նա կազմել է նաև հայոց լեզվի ուսումնական ձեռնարկ (դարձյալ 3 մասով) մանկավարժական բուհերի ուսանողների համար

(2009- 2010 թթ.): Լեզվաբանական համալսարանի ուսանողների շրջանում մայրենի լեզվի ուղղախոսությունը պահպանելու և այն ուսուցանելու համար 2005 թ. հրատարակել է «Ակնարկ հայերենի ուղղախոսության» ուսումնասիրությունը (Ս. Տիոյանի հեղինակակցությամբ):

Ֆ. Խլղաթյանը մեկ տասնյակի հասնող հոդվածներ է գրել Հայկական սովետական հանրագիտարանում՝ նվիրված լեզվի տարբեր հարցերի գիտական նկարագրությանն ու որոշ լեզվաբանների դիմանկարներին:

Գիտական այս պատկառելի ժառանգության անբաժանելի մասն են կազմում մի քանի տասնյակի հասնող նրա գիտական հոդվածները, որոնք տպագրվել են հանրապետության գիտամանկավարժական տարբեր ամսագրերում. Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ «Տեղեկագրում», Վ. Բրյուսովի անվան լեզվաբանական համալսարանի «Հայագիտություն և զուգադրական լեզվաբանություն» գիտական աշխատությունների ժողովածուի պրակներում, Ֆրանսիայի Պրովանսի համալսարանի «Արևմտահայերենի տերմինաբանական խորհրդի» տեղեկագրում և այլն:

Երբ ի մի ենք բերում պրոֆ. Ֆ. Խլղաթյանի գիտական ժառանգությունը՝ 30 անուն գիրք և մի քանի տասնյակի հասնող գիտական հոդվածներ, մեր առջև հառնում է անխոնջ մտավորականի, մայրենի լեզվի նվիրյալի և հմուտ դասախոսի կերպարը, որի կյանքն ու գործունեությունը, հիրավի, ուսանելի օրինակ են թե՛ ժամանակակիցների և թե՛ սերունդների համար: Մարդու գործունեության և կենսակերպի բարոյական նժարը նրա ստեղծած գիտական ժառանգությունն է, որ անհատը թողնում է սերունդներին: Այդ առումով Ֆ. Խլղաթյանը լիովին կատարեց երկրային իր առաքելությունը: Նա հասցրեց կատարել ավելին, քան կարող էր բավարարել մեկ մարդու կյանքը: Եվ այսքանից հետո կարելի է զարմանալ, թե երբ է նա ժամանակ գտել և զբաղվել նկարչությամբ, ստեղծել գողտրիկ կտավներ ու դիմանկարներ, մասնակցել ժողովրդական ստեղծագործող նկարիչների մի շարք ցուցահանդեսների՝ արժանանալով մասնագետների բարձր գնահատականին, նվաճելով մեդալներ և պատվոգրեր:

Նրա գեղանկարների մասին բարձր կարծիք են հայտնել արվեստաբան Շահեն Խաչատրյանը, Հայկ Ավետիսյանը, իսկ պրոֆ. Հրավարդ Հակոբ- յանը գրել է. «Ինքնուսների մեջ պրոֆեսիոնալ, պրոֆեսիոնալների մեջ ինքնուս նկարիչ Ֆ. Խլղաթյանը իր համար համեստորեն նկարել է՝ ստեղծելով մի քանի տասնյակ գործեր. որոշ գործեր այնքան լավն են, որ ամեն մի արվեստասեր կուզենար ունենար իր հավաքածուում»:

Կրթության և գիտության բնագավառում ունեցած վաստակի համար և Վ. Բրյուսովի անվան լեզվաբանական համալսարանի 75-ամյակի կապակցությամբ պրոֆ. Ֆ. Խլղաթյանը ՀՀ վարչապետի կողմից արժանացել է մեդալի, 2007 թ. ՀՀ ԿԳ նախարարության կողմից պարգևատրվել է ոսկե մեդալով, 2011-ին՝ ՀՀ նախագահի շնորհակալագրով:

Գեղանկարչական աշխատանքների համար 1987 թ. արժանացել է ժողովրդական ստեղծագործությունների փառատոնի դափնեկրի կոչման:

Հիասքանչ, գեղեցիկ և մնայուն գործեր թողեց պրոֆ. Ֆ. Խլղաթյանը, որոնք զարդարում են նրա երկրային կյանքի ուղեծիրը:

ԽԱՉԱՏՐՅԱՆ Լ. Մ.
Բանասիրական գիտությունների դոկտոր